«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Մուղնեցյան Լուսինե

Ուսումնական հաստատություն՝ Երևանի N 84 դպրոց

Երևան 2023

Բովանդակություն

Ներածություն.....4

Հետազոտական աշխատանք.....6

Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը.....8

Եզրակացություն.....19

Օգտագործված գրականության ցանկ.....21

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Տեղեկատվական հասարակության, մեդիամիջոցների լայն տարածման, մասնավորապես տեղեկատվական հեղեղի մարտահրավերներին դիմակայելու պատրաստ, մեդիագրագետ և տեղեկատվական առումով գրագետ մանկավարժներ պատրաստելու համար կարևոր է մեդիակրթության, մեդիագրագիտության առանցքային գաղափարները մանկավարժների կրթության բովանդակության մեջ ներառնելը: Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Այն ինչ մի ժամանակ թվում էր հավերժական ու անփոփոխ, այսօր միայն հարաբերական է կամ նույնիսկ ամբողջությամբ՝ սխալ:

Կրթության ոլորտի աշխատողները ամենուրեք գիտակցում են, որ դասավանդման և ուսուցման հնացված ձևերը այլևս անկարող են ստեղծել ու զարգացնել գիտելիքներ ու հմտություններ, որոնք անհրաժեշտ են քաղաքացուն գիտելիքների տնտեսության մեջ բարեկեցիկ կյանքով ապրելու համար: Հետրաբար ինչպես Հայաստանում, այնպես էլ ամենուրեք, դպրոցում անհրաժեշտ են դասավանդման և ուսուցման այլընտրանքային նոր մոտեցումներ:

Դասավանդման խնդիրների լուծման նպատակով համագործակցային ուսուցումը ուսուցիչների կողմից փորձարկվող միջոցներից մեկն է: Չնայած իր տարածմանը ուսուցիչների շրջանում և երկարատև պատմությունը, այն չի գտել լայն կիրառում: Դրա պատճառն ամենևին սովորողների առաջընթացի և ընդհանուր զարգացման վրա համագործակցային ուսուցման դրական ազդեցության վկայությունների բացակայությունը չէ:Իրականում, համագործակցային ուսուցումը ժամանակակիրց կրթության, դասավանդման և ուսուցման ամենաշատ ուսումնասիրված ոլորտներից մեկն է: Կարճ ասած՝ գիտելիքների հասարակությունում անհրաժեշտ գիտելիքների և հմտությունների ուսուցման վերաբերող հետազոտությունների արձագանքները բավական խոստումնալից են:

Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և բացահայտել երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները ուսուցչի կողմից:

Հետազոտության խնդիրներն են

- Ուսումնասիրել ուսուցման գործընթացի էությունը,
- Ուսումնական գործընթացի կազմակերպումը՝ որպես ուսուցման արդյունավետության բարձրացման պայման
- Ներկայացնել ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կարիքները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, հիմական նյութից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Հետազոտական աշխատանք

Թեմա- Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Ինչի՞ մասին ես ուզում սովորել- Ինչպես պետք է ուսուցիչը գնահատի որպեսզի կարողանա բացահայտի երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները:

Ո՞րն է թեման կամ հիմնախնդիրը- Կայուն զարգացումը դարձել է ժամանակակից հասարակությունների գլխավոր խնդիրներից մեկը, իսկ դրան հասնելու ճանապարհին փոփոխությունների վճռորոշ գործոնը, ինչ խոսք, կրթությունն է: Կրթությունը՝ հանուն կայուն զարգացման դարձել է ժամանակակից կրթական համակարգերի բարեփոխման գլխավոր ուղենիշը: Հանուն կայուն զարգացման կրթությունն օգնում է սովորողներին ընդունելու այնպիսի արժեքներ, զարգացնելու այնպիսի գիտելիքներ ու կարողություններ, որոնք կօգնեն նրանց հետագայում թե՛ տեղական, թե՛ գլոբալ մասշտաբով այնպիսի անհատական ու կոլեկտիվ որոշումներ կայացնել, որոնք կբարելավեն կյանքը՝ առանց մոլորակի ապագայի համար սպառնալիքների:

Ի՞նչ գիտես տվյալ թեմայի կամ հիմնախնդրի մասին- Կրտսեր դպրոցական տարիքը անձի կայացման կարևորագույն փուլերից մեկն է, որի ընթացքում տեղի է ունենում անհոգ մանկությունից անցում այնպիսի մի շրջանի, երբ անհրաժեշտություն է ծագում նոր դերեր կրել, պատասխանատու լինել, տարբեր պահանջներ իրականացնել: Այս շրջանում հակասության մեջ են մտնում երկու հիմնական դրդապատճառ՝ անհրաժեշտության և ցանկության: Մի կողմից, առաջնորդվելով անհրաժեշտության պահանջմունքով, երեխան բացահայտում է հասուն կյանքը, իսկ մյուս կողմից, դրդված լինելով ցանկության պահանջմունքով, երեխան ցուցաբերում է այնպիսի վարք, որը վերադարձնում է

իրեն մանկության աշխարհ, որտեղ ամենը ապահով է, ծանոթ, իրականանալի, չկան որոշակի պարտականություններ և պահանջներ:

Խաչվող հասկացությունները՝

- Ուսուցիչ և աշակերտ
- Կարիք և կարողություն:

Հետազոտության թեմային առնչվող բնագավառները՝

- Կրթական միջավայր
- Դաստիարակություն:

Ուսուցչի կողմից երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքների բացահայտումը

Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատումը իրականացվում է մանկավարժահոգեբանական գնահատման չափանիշներին համապատասխան և նպատակ ունի սահմանելու՝

1. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմաններ՝ ապահովելով ծրագրային, մեթոդական և այլ միջավայրին անհրաժեշտ հարամարեցումներ։

2. ՀՀ օրենքով սահմանված կարգով և դեպքերում ֆինանսավորման բարձրացման չափաքանակ տրամադրելու հիմքերը.

3. Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների մակարդակը, ծավալները և տևողությունը։ Երեխայի կրթական կարիքների բացահայտման, գնահատման գործընթացն իրականացվում է կրթական յուրաքանչյուր աստիճանի առաջին տարում՝ առաջին, հինգերորդ և տասներորդ դասարանում։ Գնահատվում է նաև երբ երեխայի մոտ ուսումնասիրության ընթացքում նկատվում է կայուն դժվարություններ։

Գնահատումն իրականացվում է երկու փուլով.

1. Դպրոցական մակարդակի գնահատում, որն իրականացվում է հաստատության ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից՝բացահայտելու կրթության գործընթացում երեխայի արդյունավետ մասնակցության սահմանափակումները, դրանք առաջացնող միջավայրին խոչնդոտող գործոնները և դրանց հաղթահարման խթանիչ գործոնները։

2. Տարիքային մակարդակի գնահատում, որն իրականացվում է տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրենի կողմից՝ որոշելու երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիաների խանգարման աստիճանը, և դրանով պայմանավորված՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը։ Ամեն տարի վկայագրված

յուրաքանչյուր երեխայի համար նույն խմբի կողմից կատարվում է վերագնահատում առաջընթացը և հետընթացը պարզելու համար։

Կրթության ցանկացած փուլում, երբ երեխայի մոտ նկատվում են կայուն դժվարություններ, ապա ծնողի համաձայնությունից հետո իրականացվում է երեխայի դպրոցական մակարդակի գնահատում։ Ծնողի համաձայնությունից և 3- օրյա ժամկետից հետո կատարվում է (տնօրենի հրամանով) դպրոցական մակարդակի գնահատում՝ ուսուցիչների և մանկավարժահոգեբանական աջակցության խմբի կողմից։ Դպրոցական մակարդակում գնահատումը սկսվում է ուսուցչի դիտարկումով՝ դասապրոցեսի ընթացքում, դասամիջոցին, արտադասարանական միջոցառումների ժամանակ։

ՈՒսուցչի և մանկավարժահոգեբանական խմբի համագործակցության արդյունքում կատարվում է տվյալների հավաքագրում երեխաների կարողությունների, հետաքրքրությունների, անձնային որակների, կարիքների և դժվարությունների, հասակակիցների հետ փոխհարաբերություննեևւ մասին։

Ելնելով առաջին փուլի դիտարկման արդյունքների ուսումնասիրությունն ու վերլուծությունը տևում է 10-15 օր՝ ծնողի գրավոր դիմումի ընդունման օրվանից հաշված։ Եթե երեխան մի քանի ոլորտներում ունի թեթև դժվարություններ, ապա մանկավարժահոգեբանական աջակցության խումբը մշակում է կանխարգելիչ միջամտությունների պլան՝ կիսամյակային կտրվածքով ծառայությունների տրամադրման և միջավայրին հարմարեցումների վերաբերյալ։ Եթե գնահատման արդյունքների վերլուծությունը վկայում է երեխայի մոտ որևէ ֆունկցիայի խանգարման հավանականություն, ապա, երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի երկրորդ մակարդակի գնահատում է իրականացվում։

Դրա նպատակով դպրոցը, ծնողի համաձայնությամբ, տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն է ներկայացնում երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի 2-րդ մակարդակի գնահատման դիմումը՝ կից փաստաթղերով.

Երեխայի ծննդյան վկայականի և ծնողի անձնագրի պատճեն

Երեխայի անձնական գործի պատճեն

Երեխայի առողջության վկայականի մասին փաստաթուղթը

Դպրոցական մակարդակի գնահատման արդյունքների գրանցման թերթիկը

Կանխարգելիչ միջամտության պլանը՝առկայության դեպքում։

7 10-օրյա ժամկետում նշանակվում է երեխայի տարածքային մակարդակի գնահատումը սկսելու օրը։ Տարածքային մակարդակի գնահատման միջոցով որոշվում է երեխայի մոտ այս կամ այն ֆունկցիայի խանգարման աստիճանը և դրանով պայմանավոնբած կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը։ Իսկ եթե ծնողը համձայն չէ այդ գնահատմանը, կարող է դիմել համապետական մանկավարժահոգեբանական կենտրոն։

Կարևոր է, որ ուսուցիչը կամ մանկավարժահոգեվանական աջակցության խումբը դիտարկման արդյունքում կարողանա պարզել, թե երեխան որ ոլորտում ունի դժվարություններ և բացահայտել աջակցության չափը։ Դպրոցականների համար նախատեսված երեխայի գործունեության գնահատման գործիքը բաղկացած է 20 բաժիններից. ըմբռնել հրահանգները և հետևել դրանց, հարմարեցման կարողություն, ինքնասպասարկում, խոշոր մոտորիկա, տեղորոշում և այլն։ Գործիքը կիրառող մասնագետները պետք է կատարեն օբյեկտիվ գնահատում՝ բացառելով դրական կամ բացասական վերաբերմունքը երեխայի նկատմամբ։ Գործողությունների կամ աջակցության մակարդակների նկարագրություն։ Աջակցություն չի պահանջում՝

Լիակատար ինքնուրույնությունը

Ձևավորվող ինքնուրույնությունը

Աջակցության անհրաժեշտություն՝

Թեթև աջակցություն

Միջին աջակցություն

Մեծ հաճախականությամբ աջակցություն

Ամբողջական կամ մշտական աջակցություն

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման կազմակերպման ռազմավարությունը կառուցվում է հետևյալ ելակետային դրույթների հիմքի վրա.

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները մյուսների հետ հավասար իրավունքներ ունեն հանրակրթական հաստատության ընտրության և պարտադիր պետական կրթական ծրագրերի յուրացման հարցում,

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից,

երեխայի համակողմանի բնականոն զարգացման տեսանկյունից նախընտրելի է նրա կրթության կազմակերպումը առանց ընտանիքից և հասարակությունից նրա առանձնացման:

Ընտանիքները որոշիչ դեր ունեն ներառական կրթության գործընթացում: Նրանք ականատեսն են երեխայի տարրական դպրոցից միջին, ապա ավագ դպրոց փոխադրմանը: Այդ դեպքում ինչո՞ւ են ծնողները հաճախ փոքր դեր կատարում իրենց երեխաների կրթության գործում:

Պատմականորեն ընտանիքին դուրս են մղել երեխայի կրթության հարցերով զբաղվող թիմի աշխատանքից՝ նրանց հիմնականում թողնելով մասնագիտական կարծիք լսողի դերը: Նույնը եղել է Հայաստանում, որտեղ ծնողների և մասնագետների միջև երկխոսությունը հաճախ շարունակում է հետևել առավել ավանդական, հիերարխիկ մոտեցմանը: Ծնողները կամ ընտանիքները հիմնականում ներկայանում են հանդիպումների՝ թեստերի արդյունքներին ծանոթանալու կամ իրենց երեխային վերաբերող որոշումները լսելու համար: Դպրոցը ծնողների հետ, որպես կանոն, կապվում է, երբ նրանցից որևէ բան է հարկավոր կամ երբ ինչ-որ բան է պատահել:

Ընտանիքների դերի փոփոխությունը՝ պլանավորման գործընթացին վերաբերող տեղեկատվությունը պասիվ ստացողից դեպի ակտիվ մասնակցողի, վճռական

նշանակություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ներառական կրթության պլանավորման համար: Այս փոփոխությունը թե՛ ընտանիքների և թե՛ մասնագետների համար ինքնին հսկայական փոփոխություն է: Այս փոփոխությունը կարևոր է, քանի որ ընտանիքները երեխայի մասին տիրապետում են առավել հարուստ տեղեկատվության, քան մասնագետները և գիտեն ավելին, քան վկայում են թեստերի արդյունքներն ու գնահատականները: Ընտանիքների մեծ մասը գիտակցում է երեխայի առաջընթացն ու կարիքները, սակայն, հիմնականում, մնում է որպես չօգտագործված ռեսուրս: Միայն ծնողների մասնակցության ապահովումը երբեմն շատ կարևոր նվաճում է, որը հաղորդակցումը դարձնում է փոխհարաբերություն: Հարկավոր է նկատի ունենալ ընտանիքի բոլոր անդամների մասնակցության խրախուսումը:

Մասնակիցների մեջ մտնում են ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի մերձավոր անդամները: Այս փոփոխությունը քննարկելիս, հաճախ օգտագործվում են այնպիսի եզրույթներ, ինչպիսիք են՝ մասնակցությունը և ներգրավվածությունը: Սոսկ մասնակցությունից դեպի ներգրավվածություն մեկ քայլ է: Այն ցույց է տալիս դպրոցի դիրքորոշումը ընտանիքների ներքին կարողության ճանաչմանն ու նրանց թիմի լիիրավ անդամ ընդունելուն ընդառաջ: Իրենց ներգրավված զգալով՝ մարդիկ 10 անցնում են գործի՝ ստանալու այն, ինչը ցանկանում են և ինչի կարիքն ունեն: Հաճախ ընտանիքները դպրոցում չեն ունենում ներգրավվածության զգացում և, իրենց անզոր զգալով՝ հեռանում են գործընթացից: Ուժեղ, զորացնող գործընկերային հարաբերությունների պարագայում մասնագետներն ընտանիքի համար ստեղծում են զարգանալու և թիմային գործընթացում ակտիվ դերեր ստանձնելու հնարավորություններ: Անցումը մասնակցության և ընդգրկման մոդելից դեպի ներգրավվածություն պահանջում է ավելի բարձր մակարդակի երկխոսություն և համագործակցություն:

Մասնակցությունն այդ դեպքում պահանջում է որոշակի պատասխանատվության ստանձնում, որոշակի գործողությունների կատարում: Այս փոփոխությունը ընկալելուն

օգնում է Day-ի առաջարկած աղյուսակը, որտեղ ներկայացված են մասնակցությունը ներգրավվածությամբ փոխարինելուն նպաստող, դպրոցի անձնակազմի կողմից կիրառվող մոտեցումներ: Այն օգնում է մասնագետներին առաջընթացը տարբերակել երեք մակարդակներում՝ ներկայություն, մասնակցություն և ներգրավվածություն: Ներկայության հիմնական նպատակն է՝ ծնողին օգնել, որ երեխային տեսնի որպես ներառական միջավայրի մասնիկը և գիտակցի իր դերը երեխայի կրթության գործում: Մասնակցությունը ենթադրում է ծնողների ներկայությունը դպրոցական միջոցառումներին և ժամանակ առ ժամանակ այցելությունները դպրոց՝ ծանոթանալու տարբեր մանկավարժական միջոցներին, որոնք կարող են օգտագործվել տանը՝ իրենց երեխային օգնելու համար:

Ներգրավվածության փուլում ծնողները և ուսուցիչները սկսում են համագործակցել՝ միմյանց տեսնելով որպես երեխայի կրթության գործընկերներ: Ներգրավվածությունը պահանջում է բարձր մակարդակի համագործակցություն և հզորացնում է ընտանիքին, ուսուցչին ու բազմամասնագիտական թիմի մյուս անդամներին: Միաժամանակ, ներգրավվածությունը ընտանիքին հնարավորություն է տալիս զարգացնելու երեխային օժանդակելու ստեղծագործական մոտեցումները:

Խնդիրների լուծման վրա հիմված ուսումը բացի գիտելիք փոխանցելուց, այս եղանակը նպատակ է հետապնդում զարգացնել աշակերտի՝ խնդիրներ լուծելու և համագործակցելու կարողությունները: Խնդիրների լուծման վրա հիմված ուսման դեպքում աշակերտը պետք է ինքնուրույն հետազոտություն իրականացնի, կարողանա ըմբռնել խնդրի էությունը, ինչպես նաև ունենա SS ոլորտում որոշ գիտելիքներ. ուսման այս մեթոդի նպատակներից է նաև նշված կարողությունների զարգացումը: Այս դեպքում ուսուցիչը կատարում է համակարգողի կամ խորհրդատուի դեր: Խնդիրների լուծման վրա հիմված ուսուցումն աշակերտներին սովորեցնում է, թե ինչպես է պետք սովորել: Աշակերտները սովորում են խմբի անդամների հետ համագործակցությամբ՝ լուծումներ գտնելով իրական կյանքից վերցված խնդիրների համար:

Միաժամանակ նրանք սովորում են, թե ինչպես առավելագույնս արդյունավետ համակարգեն իրենց ուսման գործընթացը: Այս մեթոդի հիմնական իմաստն այն է, որ աշակերտի կարողություններն օգտագործվում են ոչ թե պատրաստի գիտելիք տրամադրելու, այլ գիտելիք քաղելու նպատակով: Այն դասարաններում, որտեղ աշակերտներն այս մեթոդն են կիրառում, նրանք հասկանում են, թե ինչպես է ուսումը դառնում գիտելիքի որոնման գործընթաց:

Աշակերտների մոտ ձևավորվում է քննադատական մտածելակերպ, որն իրենց հնարավորություն է տալիս ձեռք բերվող տեղեկությունները փոխկապակցել այն նպատակի հետ, որի իրականացման համար կարող են օգտագործվել այդ տեղեկությունները: Խնդիրների լուծման և ուսման գործընթացի հաջողությունը կախված է աշակերտների դպրոցական և արտադպրոցական արդյունավետ աշխատանքից: Առաջադրանքների խմբային կատարումը խնայում է ժամանակը և զարգացնում է խմբի անդամների շփման և բանավոր խոսքի կարողությունները:

Խնդիրների լուծման վրա հիմնված ուսումը նորարարական մեթոդ է, որի դեպքում օգտագործվում են նոր նյութը լուծում պահանջող խնդրի տեսքով ներկայացման մանկավարժական կառուցողական մեթոդներ:

Այս մեթոդի կիրառման հիմնական քայլերն են՝

ա) առաջադրանքի սահմանումը,

բ) տեղեկությունների որոնման տարատեսակ ռազմավարությունները,

գ) տվյալներ և տեղեկություններ ստանալու մատչելիությունը (որտեղ),

դ) տեղեկությունների օգտագործումը և խնդիրների լուծումը,

ե) սինթեզը,

զ) գնահատումը:

4) Համագործակցային քննարկում

Համագործակցային քննարկումը աշակերտների հաղորդակցման և ճարտասանական կարողությունները զարգացնելու լավ եղանակ է: Քննարկման ընթացքում բոլոր

մասնակիցները հնարավորություն ունեն խոսելու (պայմանով, որ սահմանված կանոնները պահպանվում են)։

5) Ուսուցանում–ուսանում գործընթացն ունի երկու նպատակ՝

- Տվյալ առարկայի նպատակը՝ դասավանդվող նյութի հիման վրա զարգացնել ճանաչողական հմտությունները։
- Սոցիալական նպատակը՝ առաջինը, աշակերտները պատասխանատվություն են ստանձնում։ Երկրորդ, նյութը դասավանդվում է համագործակցության վրա հիմված տարբեր եղանակներով, ինչն իր հերթին զարգացնում է նաև աշակերտների շփման հմտությունները։

Համագործակցության վրա հիմված ուսուցումը խմբային ուսուցման ամենաբարձր մակարդակն է։ Խմբերի ձևավորման այս եղանակի դեպքում խմբի անդամները մեծապես ապավինում են միմյանց, ուստի զուտ առարկային առնչվող նյութեր յուրացնելուց բացի նրանք ձեռք են բերում նաև շփման հմտություններ։ Ուսուցիչն աշակերտներից չի պահանջում նման հմտություններ ունենալ. փոխարենը, նա նպաստում է դրանց զարգացմանը՝ կիրառելով համագործակցություն ապահովող տարատեսակ մեթոդներ։

Դպրոցի կյանքում ծնողների ներգրավվածությունը առանձնահատուկ նշանակություն ունի աշակերտների հաջողության համար։ Ինչպիսին էլ որ լինի ընտանիքի սոցիալ-տնտեսական կարգավիճակը, ծնողի մասնակցությունը երեխայի կրթության գործընթացին, աշակերտի զարգացման վրա մեծ ազդեցություն է գործում։ Հետազոտումների համաձայն, աշակերտները, որոնց ծնողները ակտիվորեն մասնակցում են կրթական գործընթացին, ավելի լավ արդյունքների են հասնում. Ստանում են ավելի լավ գնահատականներ, ունեն ավելի բարձր ակադեմիական ձեռքբերում և ավելի որակով կատարած տնային առաջադրանքներ, նրանց հաճախման ցուցանիշն ավելի բարձր է և աչքի են ընկնում դրական վարքով, բարեհամբույր են դպրոցի նկատմամբ և ունեն սեփական աձի և հնարավորությունների նկատմամբ հավատ։ Ծնողների ներգրավվածությունը դրական է անդրադառնում նաև կրթական

հաստատության վրա: Ուսումնական գործընթացում ծնողների ակտիվությունը հարստացնում է դպրոցի կուլտուրան և նպաստում է նրա զարգացմանը: Այսպիսով, ավելի լավ արդյունքների հասնելու համար դպրոցը և ուսուցիչը պետք է հետաքրքրված լինեն ծնողների հետ ակտիվ համագործակցմամբ: Ծնողների ակտիվ ներգրավումը դրական է անդրադառնում և դպրոցական հասարակության, ծնողների և աշակերտության վրա: Ստորև քննարկում ենք յուրաքանչյուր խմբի օգուտը. Օգուտ աշակերտին Երբ ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում,, աշակերտն ավելի լավ ձեռքբերումներ է ունենում, չնայած այն բանին, թե ինչպասին է ընտանիքի սոցիալ – տնտեսական կարգավիճակը, էթնիկական ծագումը կամ ծնողների կրթության մակարդակը:

Աշակերտը, որի ծնողը ներգրավված է երեխայի կրթության գործընթացում, ավելի հաջողությամբ է ավարտում դպրոցը և ուսումը շարունակելու ավելի լավ հնարավորություններ և պայմաններ ունի. Ծնողների հետ համատեղ ընթերցանությունը երեխայի մեջ կարթնացնի սեր գրքի նկատմամբ: Վիճակագրական տվյալներով, եթե ծնողները կապված չեն ուսուցիչների հետ կամ հետաքրքրված չեն դպրոցի առօրյա կյանքով, դրանց երեխաների ակադեմիական առաջադիմությունը մյուս երեխաների համեմատությամբ ավելի ցածր է. Երբ ծնողները ներգրավված են դպրոցի կյանքում, աշակերտներն ավելի դրականորեն են տրամադրված դպրոցի հանդեպ և սեփական անձի ու հնարավորությունների նկատմամբ ավելի շատ վստահություն ունեն. Այն աշակերտները, որոնց ծնողներն ակտիվորեն են ներգրավված դպրոցի կյանքում, ավելի լավ վարք ունեն, և նրանց դեմ կիրառված կարգապահական պատժամիջոցների միջին ցուցանիշներն ավելի ցածր են մյուսների համեմատությամբ. Դպրոցի կյանքին մասնակից ծնողների երեխաները ավելի լավ հարաբերություններ ունեն ինչպես ուսուցիչների, այնպես էլ ընտանիքի անդամների հետ. Տարբեր կուլտուրական միջավայրից դուրս եկած աշակերտները ավելի առաջադեմ են, երբ ծնողները և ուսուցիչները միասնաբար ձգտում են ընտանիքում և դպրոցում եղած կուլտուրական տարբերությունների համատեղ համաձայնեցմանը:

Ծնողների ներգրավվածությունը կարևոր է ինչպես աշակերտի ուսման արդյունքների բարելավման, այնպես էլ ծնողի ունակություն-հմտությունների զարգացման համար:

Փոխվում է ծնողի սոցիալական, զգացմունքային կողմը և անձնական հատկանիշները: Երեխայի կրթության գործընթացին մասնակցելու հետևանքով ծնողը. Ավելի է հասկանում սեփական որդուն: Ավելի մեծ ուշադրություն է հատկացնում երեխայի սոցիալական, զգացմունքային և մտավոր զարգացման անհրաժեշտություններին. Դառնում է ավելի հոգատար, ավելի նվազ խիստ որդու հանդեպ և ավելի շատ է գնահատում որդու ձեռքբերումները, դառնում է ավելի ինքնավստահ և հաճույքով կցվում է երեխայի կրթության և դաստիարակության գործընթացին. Ավելի ինքնավսատահ է որոշումներ կայացնելիս ավելի շատ ուշադրություն է դարձնում սեփական գիտելիքների մակարդակին և ունակություն/հմտությունների բարձրացմանը. Ավելի առաջադիմորեն է օգտագործում այկևայլ հնարավորությունները սեփական ընտանիքի և որդու կարիքների բավարարման հմար. Երեխային տալիս է հնարավորություն, ավելի վստահորեն արտահայտելու սեփական տեսակետները, հիմխնդիրները: Ավելի դրական հարաբերություններ է ստեղծում իր երեխայի ուսուցիչների հետ: Ավելի լիիրավ է տիրապետում երեխայի վիճակի մասին տեղեկությանը և ժամանակին միջոցներ է ձեռք առնում նրա հիմխնդիրները լուծելու նպատակով: Օգուտ ուսուցչին Ծնողների հետ ակտիվ համագործակցումս օգնում է ավելի ինքնավստահ դառնալուն:

Ուսուցչի մոտ հանդես է գալիս ավելի հարգանք սեփական մասնագիտության նկատմամբ, նրանք ավելի են բավարարված իրենց մասնագիտությունից և նրա արդյունքներից. Ծնողների ներգրավվածությունը բարձրացնում է ծնողի և ուսուցչի միջև կապվածության որակը, ինչը օգնում է ուսուցչին պարբերաբար ստանալ սպառիչ տեղեկություն երեխայի մասին: Աշակերտի անհատական կարիքների կարգավորումը ուսումական գործընթացի կողմից ուսուցչին ցանկալի արդյունք կտա: Օգուտ դպրոցին Ծնողների ներգրավվածությունը դրականորեն է ազդում ընդհանրապես դպրոցի վրա ևս. Դպրոցը ծնողների կողմից ավելի աջակցում ունի, աճում է դպրոցի

հեղինակությունը հասարակության մեջ, դպրոցական ծրագրերը, որոնցում մասնակցում են ծնողները, ավելի հաջողված են, քան այն ծրագրերը, որոնցում ծնողները չեն մասնակցել. Այն դպրոցում, որտեղ աշակերտների հաճախումը ճատ ցածր է, ծնողների ներգրավվածության բարձրացումից հետո այդ ցուցանիշը բացահայտորեն կբարելավվի:

Եզրակացություն

Ամփոփելով կատարված հետազոտական աշխատանքը՝ կարող ենք փաստել, որ կրթական կարողությունները չեն ծագում իրենք իրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը:

Կրթությունն ուսուցման միջոցով մի գործընթաց է, որով հասարակությունը գիտակցված կերպով իր կողմից կուտակված գիտելիքները, նվաճումները, հմտությունները և արժեքները մի սերնդից մյուսին փոխանցում է կրթական հաստատությունների միջոցով: Կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթության նպատակն է անձի և քաղաքացու մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումը: Կրթական մակարդակը կարևոր է նաև ամեն մի մարդու կյանքում, նրա հասարակական դիրքի և նվաճումների համար: Ելնելով այդ կարևորությունից՝ Սահմանադրությունն ամրագրել է՝ <<Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք>>:

Մեր օրերում էականորեն փոխվել է ուսուցչի դերը հասարակության մեջ : Երբեք ուսուցիչ աշխատելն այսքան դժվար չի եղել: Կյանքը դեռ երբեք այդպիսի կարևոր պահանջներ չի ներկայացրել: Ուսուցչական հեղինակությունը ինստիտուտն ավարտելիս դիպլոմի հետ միասին չի տրվում: Մենք ինքներս սեփական քրտինքով պիտի նվաճենք և պահպանենք մեր մասնագիտության պատիվը: Այսօրվա աշակերտը չի ցանկանում մարդուն հարգել և լսել միայն նրա համար, որ նա տարիքով մեծ է և ուսուցիչ է:

Դասի գնացող ուսուցիչը աներևակալիորեն շատ բան պետք է կարողանա անել՝ փոխանցել գիտելիքներ և դրանց նկատմամբ հետաքրքրություն առաջացնել, արագ կողմորոշվել ամենաանկանխատեսելի իրավիճակներում, տիրապետել ժամանակի զգացողությանը, լինել հիանալի կազմակերպիչ, աչքի ընկնել նպատակասլացությամբ և էներգիայով, համբերատարությամբ և դիմացկունությամբ, լինել ներողամիտ և զգայուն, արդարամիտ և ոգևորված, հնարամիտ և սրամիտ:

Եթե ուսուցիչը խոսում է իրար հարգելու և սովորեցնում է , որ երեխաները հարգեն և սիրեն մեկը մյուսին, բայց ինքը որպես օրինակ չի ծառայում լինելու այդպես, դա երեխայի մոտ առաջեցնում է խաբվածության զգացում և անվստահությունն ուսուցչի խոսքին: Ուսուցչի մեծագույն որակն է սիրել երեխաներին:

Օգտագործված գրականության ցանկ

- Կրթության մասին ՀՀ օրենք, մաս 1, 10 . 7-րդ կետ
- Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգ
- Կրթության կազմակերպման մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրման կարգը, ՀՀ կրթության և գիտության նախարարի 13 . 04 . 17թ . N 370- Ա/2 հրամանի հավելված, 38-րդ կետ։